Զաքարյանների հրովարտակը, որ պահպանվել է Սանահնի «Քոթուկի» մեջ, հետևյալ բովանդակությունն ունի.

«Անունն Աստուծոյ հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ։

Ի ժամանակիս մեր առաջնորդ որ ուխտիս Սանահնուս ամենայն լի շնորհաւք Աստուծոյ վարդապետն Գրիգոր. որդի Աբասայ, զոր հոգայր իմաստութեամբ զայր այրականութիւն վանից, ես՝ մանտատուրթաւխուցէս ըսպասալար Զագարէս եւ եղբայրս իմ աթաբակ Իվանիս, որդի[ք] բարի շառաւիղ Սարգսի, [եկինք] [յ]երկրպագութիւն սուրբ Աստուածածնիս և կաթուղիկիս։ Բերկրեցաւ սիրտ ամենեցուն և մեր սիրտս այս էր, որպէս ասէ տէրն [յ]աւետարանն, թէ «ո[ւ]ր գանձք ձեր են՝ անդ և սիրտք ձեր եղիցին»։ Կամք արարչին սիրոյ ծնաւղաց հանգրստեանս միշտ, որ շինեցի զեկեղեցիս, ի վերայ սոցայ արարի զգանձագին հայրենիք մեր ի սուրբ ուխտիս ի Սանահնիս և շինեալ էր զթագաւորն մեր տիէզերական Գաւրգէն և Խոսրովանուշ թագուհինն։ Եւ ես այլ հաստատեցի ընծայ, զոր Դաւիթ իշխան, որդի Շոդրոկայ, գնեալ էր զՈրնակն և տվեալ ի դուռն սուրբ Աստուածածնիս։ Եւ ես մանտայուրթաւխուցէս ամիրսպասալար Զագարէս և աթաբէկ Իվանիս՝ եղբայրս իմ, հաստատեցաք անդառնալի հրամանս- (զ)զՈռնակն և (զ) զՈռնակայ գոմն, զՎաշխն և զՎաշխայ սեռն, զԴարքն և զՆո[ր]աշէնն և զՀալալաշէնն ամենայն խարճէ ազատ ի պատրոզական ցեղէ։ Եւ տեսաք, զի Աստուածաշէն էր և թագաւորաշէն, և բերկրեցաւ սիրտ մեր վասն պատճառին հմար, որ կու հրամայէ փրկիչն [յ]աւետարանն. «երանի այնոցիկ, որ ունիցի[ն] յիշատակ ի Սիոն և ընդանի վերինն Երուսաղէմ»։ Աստուած շնորհաւոր անէ սուրբ Աստուածածանիս, ի մեր գերեզմանատանս զՈրնակն և զՈրնակայ գոմն, իւր Դ (4) կոպարովն, սարովն և ձորովն, ջրովն, ջաղացովն, զՎաշն և Վաշայ սեռն իր ամէն սահմանովն՝ սարովն և ձորովն, ջրովն և ջաղացովն, իր ամէն Հոռսագաճովն, զԴարքն, և զՆորաշէն, Հալալաշէն տվաք սուրբ Աստուածածնիս և սուրբ կաթուղիկիս և մեր գերեզմանատանս անդառնալի հրամանաւ մեր։ Զիշխէ վանք [ոք] հակառակէք ո՛չ իմոց, և ո՛չ աւտարաց, ոչ ազատաց և ո՛չ ազատորդոց (անտէնի) [յանդգնի] ու հակառակել կամենայ կամ իմոց կամ աւտարաց Գ սուրբ ժողովոյն անիծած է և իմ մեղաց տէր է առաջի Աստուծոյ և պատիժն Կայենի և վարձքն Յուդայի առնու, հետ խաչ հանողացն տանջեսցի, ի անշէջ գեհենքն մաշեսցի, Կորխայ և Բեհեղիցն լիցի մասնակից, յաւուրն մինչ ի նեռն անիծած է, զպատիժն Յուդայի առցէ և ուրացողացն լինի դասակից և պսակակակից։ Կատարողքն աղաչանցս աւրհնին կամակցութեամբ Աստուծոյ, և հակառակողքն պատիժս կրեսցեն։

Այսպես գրեցաւ Աւքրաւպիլ սարկաւագի ձեռամբս։

Ես մանտատուրթաւխուցէս Համազասպ, որդի Սարգսի, տէրս Աղէկու վկայ պարոն Շահանշահի հրամանացս։

Ես Բումբէս, տէրս Աւգաւրվայ վկայ եմ այս հաստատ սիկիլիս, որ ետ պարոն Շահնշահ ի սուրբ Աստուածածնիս և իւր գերեզմանատանս։

Ես Մարզպանս, տէրս Ագարակու վկայ եմ [զինչ] ի վերն գրած է։

Ես Վասակ, Կուճի պարկս վկայ եմ անդառնալի հրամանացս պար[ո]ն Շահընշահի զինչ ի վերն գրած է։

Ումէկս, տէրս Կողեսանու, վկայ, զի անդառնալի հրամանք է պարոն Շահնշահի։

Ես Գարգառուց տէրս վկայ եմ, Ղուլիս, որ գրեցաւ գիրս հրամանաւ պարոն Շահընշահի և աթայբակ Իւանէի։

Ի դրան սուրբ Աստուածածնիս և (յ)առաջնորդութեան Գրիգորի վարդապետի, որդի Աբասայ, ի թվականիս հայոց ՈԼԳ»[1]։

Այս հրովարտակի թվականը ՈԼԳ (633), որ մեր թվականով ստացվում է 1184, ճիշտ չի ոչ վանքի վանահոր և ոչ էլ Զաքարյանների թվականներով, որովհետև 1184 թվականին դեռևս Զաքարեի և Իվանեի հայրը՝ Սարգիսը կենդանի էր և այդ ժամանակ Գրիգոր Տուտեորդին էր վանքի առաջնորդ և ոչ թե Աբասի որդի Գրիգորը։

1 Սանահնի «Քոթուկ», էջ 56—61։